# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 02
## «ԳԳԱԿ-ԳՀԾՁԲ-21/8/Հ» ծածկագրով գնանշման հարցման ձևով գնում կատարելու ընթացակարգի հայտերի բացման նիստի

ք. Երևան

04.08.2021թ.
ժամը 11-00-ին

Մասնակցում էին
-Վարշամ Կարապետյան՝ Ֆինանսատնտեսական աշխատանքների գծով Գլխավոր տնօրենի տեղակալ
**(գնահատող հանձնաժողովի նախագահ)**
- Սուրեն Հակոբյան՝ Շենքերի սպասարկման բաժնի պետ
**(գնահատող հանձնաժողովի անդամ)**
- Հովհաննես Պողոսյան՝ Շենքերի սպասարկման բաժնի պետի տեղակալ
**(գնահատող հանձնաժողովի անդամ)**
Բացակայում էր – Միլենա Հարությունյան՝ Շենքերի սպասարկման բաժնի գլխավոր մասնագետ
**(գնահատող հանձնաժողովի անդամ)**

**Հանձնաժողովի քարտուղար՝**
-Արմինե Միրումյան՝ Ֆինանսական և հաշվապահական հաշվառման վարչության պետի տեղակալ

**«ԳԳԱԿ-ԳՀԾՁԲ-21/8/Հ» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման և արդյունքների ամփոփման մասին.**

1. «ԳԳԱԿ-ԳՀԾՁԲ-21/8/Հ» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերը 2021թ. հուլիսի 28-ին հրապարակվել է ՀՀ Ֆինանսների նախարարության Պետական գնումների պաշտոնական ինտերնետային կայքում
2. Մինչև հրավերում փոփոխությունների կատարման համար սահմանված վերջնաժամկետը լրանալը, էլեկտրոնային փոստի միջոցով գնահատող հանձնաժողովի քարտուղարին չի ներկայացվել որևէ հիմնավորումներ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ:
3. Հայտերը ներկայացվել են թղթային տարբերակով, բացվել են «Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ -ում, ք.Երևան, Չաքիյան 10 հասցեով թիվ 15 սենյակում, 2021թ օգոստոսի 4-ին, ժամը 11:00-ին
**3.1** Ընդունել ի գիտություն, որ հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները

| Մասնակցի անվանումը | Գտնվելու վայրը | ՀՎՀՀ | Հեռ. | Էլ.փոստի հասցե |
|---|---|---|---|---|
| «ՍԻ ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ | ՀՀ, Վայոց ձոր, Արենի փող.14տուն19, | 08914874 | Հեռ 055504093 | sienergy@yahoo.com |

**4. Տվյալներ ծրարները կազմելու և ներկայացնելու՝ սահմանված կարգի պահանջների համապատասխանության մասին.**
4.1 «ՍԻ ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ կողմից ներկայացված ծրարը կազմված է հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:
**5. Տվյալներ բացված յուրաքանչյուր ծրարում ընթացակարգի հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին**
5.1 «ՍԻ ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ կողմից ներկայացված ծրարում հրավերով նախատեսված բոլոր փաստաթղթերը առկա են: Բոլոր ներկայացված փաստաթղթերը կազմվել են բնօրինակից և 2 օրինակ պատճենից:
**6. Տվյալներ մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան կազմված լինելու մասին.**
6.1 «ՍԻ ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ -ի կողմից ներկայացրած փաստաթղթերը կազմված են հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

7.Տեղեկություններ մասնակիցների առաջարկած գների վերաբերյալ

| Չափաբաժնի համարը | Կազմակերպության անվանումը | Նախահաշվային արժեք /տառերով և թվերով/ | Արժեք/Ինքնարժեք և կանխատեսվող շահույթի հանրագումարը/ /տառերով և թվերով/ | ԱԱՀ** /տառերով և թվերով/ | Ընդհանուր գինը /տառերով և թվերով/ |
|---|---|---|---|---|---|
| 1 | «Սի ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ | 4632000 /չորս միլիոն վեց հարյուր երեսուներկու հազար/ | 2644000/ երկու միլիոն վեց հարյուր քառասունչորս հազար/ | - | 2644000/ երկու միլիոն վեց հարյուր քառասունչորս հազար/ |
| 2 | - | 2660000/ երկու միլիոն վեց հարյուր վաթսուն հազար/ | - | - | - |

***8.*** ***Տեղեկություններ գների նվազեցման նպատակով իրականացված բանակցությունների վերաբերյալ.*** Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջներով՝ հայտ ներկայացրած միակ մասնակցի հետ հանձնաժողովի նիստում վարվել են բանակցություններ՝ առաջարկված գնի նվազեցման նպատակով, որի արդյունքում գինը մնացել է անփոփոխ:

<u>Որոշում2</u>

**ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ Ո Ր Ո Շ Ե Ց՝**

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետով

1. **« ԳԳԱԿ-ԳՀԾՁԲ-21/8/Հ»** ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին չափաբաժնում հայտ ներկայացրած միակ մասնակցին՝ **«Սի ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ-ին**, ճանաչել ընտրված մասնակից՝ որպես գնման ընթացակարգի պայմանները բավարարող մասնակից և կնքել պայմանագիր:
2. **« ԳԳԱԿ-ԳՀԾՁԲ-21/8/Հ»** ծածկագրով գնման ընթացակարգի 2-րդ չափաբաժինը հայտարարել չկայացած՝ <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ ենթակետի համաձայն:
3. Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:
4. <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն անգործության ժամկետ կիրառելի չէ:
5. Պայմանագիր կնքելու նպատակով ընտրված մասնակցին ծանուցել ներկայացնելով պայմանագրի նախագիծը և առաջարկել 10 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել պայմանագրի ապահովում կնքվելիք պայմանագրի 10 (տասը) տոկոսի չափով և որակավորման ապահովում՝ իր ներկայացրած գնային առաջարկի 15 (տասնհինգ) տոկոսի չափով :

**Ընդունվել է որոշում կողմ 3, դեմ 0:**

**Գնահատող հանձնաժողովի քարտուղարին**

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետև՝ Կարգ) 43-րդ կետով

1) հայտերի բացման նիստի արձանագրությունները բնօրինակից, ինչպես նաև գրանցամատյանի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակները հրապարակել տեղեկագրում.

2) հայտերի բացման նիստին ներկա անդամների կողմից ստորագրված շահերի բախման բացակայության մասին հայտարարությունների բնօրինակներից արտատպված (սկանավորված) տարբերակները հրապարակել տեղեկագրում:

2) հայտերի բացման նիստին ներկա անդամների կողմից ստորագրված շահերի բախման բացակայության մասին հայտարարությունների բնօրինակներից արտատպված (սկանավորված) տարբերակները հրապարակել տեղեկագրում:

3) հրապարակել տեղեկագրում այն ֆիզիկական անձի (անձանց) տվյալները, ով ուղղակի կամ անուղղակի ունի մասնակցի կանոնադրական կապիտալում քվեարկող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) ավել քան տաս տոկոսը, ներառյալ ըստ ներկայացնողի բաժնետոմսերը, կամ այն անձի (անձանց) տվյալները, ով իրավունք ունի նշանակելու կամ ազատելու մասնակցի գործադիր մարմնի անդամներին, կամ ստանում է մասնակցի կողմից իրականացվող ձեռնարկատիրական կամ այլ գործունեության արդյունքում ստացված շահույթի տասնհինգ տոկոսից ավելին (իրական շահառուներ)

4) «Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից «Հակահրդեհային սարքերի վերանորոգման և պահպանման ծառայությունների» ձեռք բերման «ԳԳԱԿ-ԳՀԾՁԲ-21/8/Հ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության Պետական գնումների պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակելու համար:

**Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները, ազգանունները և ստորագրությունները.**

**Հանձնաժողովի նախագահ՝**

Ֆինանսատնտեսական աշխատանքների գծով Գլխավոր տնօրենի տեղակալ — Վ.Կարապետյան------------------------

**Անդամներ՝**

շենքերի սպասարկման բաժնի պետ — Ս.Հակոբյան--------------------------

շենքերի սպասարկման բաժնի պետի տեղակալ — Հ.Պողոսյան--------------------------

**Հանձնաժողովի քարտուղար՝**

-Արմինե Միրումյան ՝ Ֆինանսական և հաշվապահական հաշվառման վարչության պետի տեղակալ ----------------